



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԱԴՐԵՆԱ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՎԱԴՐ ՉՈՄԻՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԻՆՍԻՏՈՒ
ՏՈՒԹՅԱՆ
Ակադեմիա
ՀԱՅԱՍՏԱՆ
ՀԽՍՀ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ա. Ա. Խ. Հ.

ԳՅՈՒՂԻԱՐՀՈՒՐԴՆԵՐԻ

Մ Ա Ս Ի Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԻՆՍԻՏՈՒ
ՏՈՒԹՅԱՆ
Ակադեմիա
ՀԽՍՀ

352

4-21

ՀՐԱՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱԴՐԵՆԱ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՎԱԴՐ ԿԱԶՄԱՎԱԾՆԻ

Բ. Ա. Գ. Օ. Ւ. — 1931

Պրոլետարիատ բոլոր յերկրների միութեան
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵ

3

ԱԴՐԵՋԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵ

-352
4-21

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԻՆՍԻՏՈՒԹԵԱՆ
ԵՎՐՈՅԵՎԵՆԻՑ
ԱԿԱДЕՄԻԱ
ССՀ

15 JAN 2010

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ա. Ա. Խ. Հ.

ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ

ՄԱՍԻՆ

ՀԱ-21883

17 MAY 2013

39.766



Гостип. „Кр. Восток“
Азполиграфа ВСНХ.
Баку, Караптин., 84.
Главл. 4411, Зак. 9052.
Стат-формат А-5.
Тираж 1500

58916 · 67

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՍԽՀ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Գյուղխորհուրդը—պրոլետարական դիկտատուրայի որդանը գյուղում—իշխանության բարձրագույն որգանն և հանդիսանում՝ նրա կողմից միացվող տերիտորիայում:

2. Գյուղխորհուրդի հիմնական ու վճռական խնդիրն և հանդիսանում գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցում այնպիսի տեմպով, վորոնք ապահովում են մինչև 5-ամյակի վերջը գյուղական տնտեսության կոլեկտիվացման ավարտումը հիմնականում՝ կուսակցության հիմնական գծի հաստատուն և անշեղ իրականացման միջոցով, վճռականորեն պարագարելով տվյալ ետապում զլսավոր վտանգ հանդիսացող աջ թեքման բուրուր երեսութների, «ձախ» ծովան և դեպի արդ թեքումները չեղած հաշտվողական վերաբերմունքի դեմ, խիստ հականարկած տալով բոլոր կուլակային և հակախորհրդական փորձերին՝ ընդգիւմանալու գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցման:

Այդ հապատակով գյուղխորհուրդը՝

ա) կազմակերպում և ամրապնդում և սովխոզները, մերենատրակտորատներին կայանները, կոլխոզները՝ կոլեկտիվ տնտեսությունների մեջ գրավելով աշխատավորների նորանոր ուժերը, հարձակում և տանում կուլակային ու դասակարգավորին—թշնամական տարրերի դեմ և իրագործում և կուլակության—վորպես զատկարգի լիէվիդացիան՝ համատարած կոլեկտիվացման հիման վրա,

բ) աջակցում և յերկրի ինդուստրացման տեմպերի արագացմանը և աշխատանքի սոցիալիստական ձևերի—սոցմրժման, հարվածայնության, հասարակական բռնքսիրի, հանդիպակաց պլանի, միջանցիկ բրիգադների զարգացմանը,

գ) նպաստում և, վար հասարակ գյուղատնտեսական և արտադրական կոոպերատիվ միացումներն անցնեն ավելի բարձր

ձեմբի, լոկ այն գյուղերում, վորոնք համատարած կոլեկտիվացումով չեն ընդպրկված—նպաստում և անհատական չքավորական ու միջակա յին տնտեսությունների բարձրացմանը՝ նրանց դարգացումն ուղղելով դեպի կոլեկտիվացում.

դ) կազմակերպում և պետության կառավարման գործին և գրաֆում ամրողովին բոլոր աշխատավորներին—կոլխոզներներին, բատրակներին, չքավորներին և մենատնտեսումից միջակներին.

յի) կազմակերպում և կուլտուրական հեղափոխությունն իրադրելու, կենցաղի արմատական վերակառուցման և սոցիալ-կենցաղային մատցորդներն արմատախիլ անելու միջոցառումները.

զ) անց և կացնում լենինյան քաղաքականությունը, վըճռական պայքար տանելով մեծապետական շովինիզմի և տեղական նացիոնալիզմի բոլոր յերևույթների դեմ, միջոցներ և ձեռք առնում ազգային փոքրամասնությունների շահերն ապահովելու և իրավունքները պաշտպանելու, նրանց քաղաքական, տնտեսական ու կուլտուրական մակարդակը բարձրացնելու և նրանց շինարարության մեջ գրավելու համար.

հ) կազմակերպում և աշխատավորներին հեղափոխության նվաճումներն ամրապնդելու և պաշտպանելու համար, պրոլետարական գիտատուրայի թշնամիներին ճնշելու համար և խորհրդային պետությանը՝ միջազգային բուրժուազիայի և նրա արբանյակների ներխուժությունից՝ ուղղմական պաշտպանության համար.

թ) միջոցներ և ձեռք առնում ցանքային տարածությունները լայնացնելու և տեխնիկական մշակույթների (բամբակ, կառուչկաբերներ, կենափ և ալյն) բերքատվությունը բարձրացնելու և անասնաբուծությունը զարգացնելու համար՝ պայմաններ ստեղծելով, վոր քոչվորները նստակյաց դառնան.

թ) կյանքում իրագործում և յեկեղեցին պետությունից և զպրոց յեկեղեցուց բաժանելու որենքները, սիստեմատիկ և ամենօրյա պայքար և մզում կրոնական կազմակերպություններն ու կրոնական նախապաշարմունքները՝ խորհրդային իշխանության ու նրա միջոցառումների դեմ վորպես պրոպագանդայի գործիք ոգտագործելու դեմ, այդ պայքարին զրավելով աշխատավորների լայն մասսաները:

II

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱԿԱՆԵՐԸ

3. Կեկավարվելով գործող որենքներով և վերապատրական իրավունքով՝ կուրդական խորհուրդը՝

ա) լուծում և գյուղանտեսության տեղական նշանակություն ունեցող հարցերը և քննարկում և ռայոնական, շրջանակին, հանրապետական, ֆեդերատիվ ու համամիութենական նշանակություն ունեցող հարցերը, գրանց մասին իր առաջարկությունները ներկայացնելով վերապատրական որգաններին.

բ) դեկավարում և իր իրավասության տակ գտնվող բոլոր հիմնարկները, ձեռնարկներն ու կազմակերպությունները, հըսկում և իր իրավասության տակ չգտնվող, բայց իր տերիտորիայում գտնվող ձեռնարկների ու կազմակերպությունների գործունելությանը և աջակցում և այն միջոցառումներին, վոր նրա տերիտորիայում անց են կացնում պետական որգաններն ու հաստրակական կազմակերպությունները. •

գ) միջոցներ և ձեռք առնում, վոր բոլոր ձեռնարկները, կազմակերպությունները և առանձին քաղաքացիներն իրագործեն իրանց վրա դրված պետական խնդիրները. հսկում և, վոր իր տերիտորիայում բոլոր քաղաքացիներն ու պաշտոնատար անձերը կատարեն խորհրդային իշխանության որենքներն ու կարգադրությունները.

դ) կազմակերպում և մշտական սեկցիաներ ու հանձնաժողովներ դյուզիվորհրդին կից, խորհրդի գործնական աշխատանքին գրավելով բանվորներին, բանվորունիներին, կոլխոզիներին, կոլտնտեսառնիներին, բատրակներին ու բարակունիներին, նույնապես և գյուղի չքավորամիջակային խավերին, նրանցից ավելի ակտիվներին, մանավանդ կանանց, առաջ և քաշում դեկավար աշխատանքի՝ գյուղական ու ուայնական խորհրդային, կոռպերատիվ և տնտեսական ապարատում.

յի) միջացներ և ձեռք առնում պատրաստելու և վերապատրաստելու խորհրդային ու կոլխոզային կազմեր. դրա համար կազմակերպում և կարձ ժամանակյա դասընթաց-սեմինարներ, գործուղում և զյուղական խորհրդային, կոլխոզային և կանանց ակտիվը բարձրագույն ու միջնակարգ ուսումնական հիմնարկները, քաղաքական դասընթացները և այլն, այդ ակտիվին քաշում և հեռակա ուսուցման գործին.

զ) սիստեմատիկ աշխատանքն և տանում բատրակների ու չքավորների միջի, միջոցներ և ձեռք առնում կազմակերպելու և լավացնելու բատրակների ու չքավորների խմբակների աշխատանքը և նրանց քննության ու դնում այն կարևորագույն հարցերը, վոր լենթակա են գյուղական խորհրդի քննարկմանը.

ե) ամբողջ պետական ու կոռպերատիվ ապարատի հետագա քարելավման և վերակառուցման միջցառումներն ե անց կաց- նում, մաքրելով նրան դասակարգացին խորթ տարրերից:

4. Խորհուրդների յեվ խորհուրդների համագումարների ընտրու- րյունները կազմակերպելու բնագավառում գյուղական խորհուրդը՝

ա) կազմակերպում և գյուղական ընտրական հանձնաժո- ղով ու տանում և հաշվեառ և ընտրական կամպանիաները.

բ) յերկուն և բերում այն անձերին, վորոնք յենթակա և ընտրական իրավունքներից զրկվելու և ընտրական իրավունք- ներից զրկված անձերի մշտական հաշվեառն և տանում ուղոնա- կան գործադիր կոմիտեների կողմից հասաւատված ցուցակներով.

գ) պատվիրակներ և ընտրում խորհուրդների ուղոնական համագումարի համար:

5. Դյուլի սոցիալիստական վերակառուցման յեվ զյուդական տնտեսության զարգացման բնագավառում գյուղական խորհուրդը՝

ա) զյուսավորում և ղեկավարում է չքավորամիջակային մասսաների հոսանքը ղեպի կոլխոզ կոլխոզային շարժման մեջ պայքարում և ինքնահոսի աշ ոպորտունիստական գրույթի ղեմ և վոչ մի շեղում չի թույլ տալիս կամավորության լենինան սկզբունքից, բնում խեղդելով վարչավորման ամեն մի փոքը մենատնտեսավարների մեջ համբերատար ու հաստատակամ կեր- պով բացատրական աշխատանք և տանում համոզելու գյուղացի- ների մասսաներին, վոր նրանք կանգնեն կոլեկտիվացման ուղղու վրա և գործով ապացուցելով կոլեկտիվ սնտեսության բոլոր առավելությունները՝ մենատնտեսության հանդեպ.

բ) ղեկավարում է գյուղատնտեսական պարզ միացումների, հողը միասին մշակող ընկերությունների ու կոլխոզների արտա- զըռության ուղիղ կազմակերպումը, նրանց ամրապնդումը և աս- տիճանական անցնումը համայնական ավելի բարձր աստիճանին.

գ) մասնակցում է կոլխոզների արտադրական պլանները կաղմելուն, հաստատում և այդ պլանները և ստուգում և դրանց կատարումը, ներգործում և կոլխոզների աշխատանքի վրացանք- սային տարածությունները լայնացնելու, ավելի արժեքավոր մը- շակույթների արտադրությունը մեծացնելու, բերքատվությունը բարձրացրելու գործում ազգոմինմումն իրագործելու, պարա- տանյութերն ամենամեծ չափով ոգտագործելու, աղնացեղ ոեր- մեր բաժանելու, արտադրանքի վորակը բարձրացնելու և ինք- նարժեքը հետանացնելու միջոցով.

դ) ղեկավարում է կոլխոզների, մեքենա-արակտորացին կայանների, սովորականների աշխատանքի կազմակերպումը, աղնացան չքավորամիջակային տնտեսություններին՝ սովորականների, կոլ- խոզների և մեքենա-արակտորացին կայանների կողմից արտա-

աանքային դիսցիպլինայի ամրապնդումը, աշխատանքի գործար- քային վճարում մատցնելը՝ աշխատելով բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, զլիավորելով մասսաների արտադրա- կան հնտուզիազմը՝ ղեկավարում և հարվածայնությունն ու սոց- մրցումը, կոլխոզներում աշխատանքի բրիգադային սխտեմ մըտ- ցնելը, զնուական պայքար և տանում պղողուների, ովաչության և կուլակային բոլոր արամադրության ղեմ.

յե) պայքար և մղում ամեն մի անտնուսության ղեմ՝ սով- խոզներում, կոլխոզներում, մեքենա-արակտորացին կայաններում, ղեկավարում և նրանց բոլոր արտադրական հնարավորություն- ների (կննդանի, անկեդան ինվենտար, բանվորական ուժ) ուա- ցիսնալ ոգտագործումը և հսկում և, վոր նրանք կատարեն իրենց պարտականությունները պետության հանդեպ.

զ) պարբերաբար լսում և գյուղական խորհրդի տերիտո- րիայում գտնվող կոլխոզային շինարարությանը մասնակցող բո- լոր հիմնարկների ու ձեռնարկների, նույնակես և կոլխոզների գործունեյության հաշվեավությունները.

ե) իր յեղբակցությունն և տալիս կոլեկտիվ տնտեսություն- ների՝ իրենց վարկ, ինվենտար և այլն տալու մասին առած միջ- նորդությունների առթիվ.

ը) իր յեղբակցությունն և տալիս նոր կազմակերպող կոլ- խոզների սոցիալական կազմի և վարչության որգանների մասին. առանց այդ յեղբակցության կոլխոզների կանոնադրությունները չեն գրանցվում.

թ) կանգնեցնում է կոլխոզների և այլ տնտեսական ու կո- պերատիվ միացումների ապորինի վորոշումներն, այդ մասին ան- հապաղ հաղորդելով ուայսնական գործադիր կոմիտեին.

ժ) ղեկավարում է կոլեկտիվ տնտեսությունների նոր շի- նարարությունը և իրականացնում և կոլխոզներում, մեքենա- արակտորացին կայաններում ու սովորականներում սոցիալ-կենցա- դային հիմնարկների կազմակերպման միջոցառումները (հասար- կական ճաշարան, վացատուն, հանրակացարան, մանկամասուրներ ու հրապարակներ և այլն).

ժա) կազմակերպում է չքավորների և մենատնտես-միջակ- ների եքսկուրսիաներ՝ ղեպի կոլխոզները, մեքենա-արակտորացին կայանները և սովորականները. կոլխոզնիկներից ստեղծում և մենատն- տեսակարներին կոլխոզները գրավելու բրիգադներ և նոր կոլ- խոզներ կազմակերպելու նախաձեռնող խմբակներ. անհատական չքավորամիջակային տնտեսություններին՝ սովորականների, կոլ- խոզների և մեքենա-արակտորացին կայանների կողմից արտա-

դրական ոգնություն կազմակերպելու միջոցառություն և իրագործում.

ԺԲ) կազմակերպում և պատգամավորական խմբակներ կողմանքով սովորություններում և մեքենա-տրակտորային կայաններում՝ այդ խմբակները գրավելով ընտրովներին, այդ պատգամավորական խմբակների միջոցով ապահովելով խորհրդի ամենորյա ազդեցությունը՝ կոլխոզների աշխատանքի վրա.

ԺԳ) կազմակերպում և գյուղատնտեսական արտադրական խորհրդակցություններ, վորոնց կազմի մեջ գյուղխորհրդի անդամների ու թեկնածուների հետ միհասին մտնում են վերստուգիչ հանձնաժողովի անդամները, լավագույն արտադրականները՝ կողմանքներից, բատրակներից, չքավորներից ու միջակներից, կուսակցական, կոմյերիտական, պրոֆմիութենական, կոռակերատիվ ու հասարակական կազմակերպությունների, փոխոգկոմների, պատվիրակունիների ժողովների ներկայացուցիչները, գյուղատնտեսները, հողաշինաբարները, բժիշկները, ուսուցիչները, խրճիթվարները, ազրո և զոոլիազորները, հողային հասարակությունների և այլ հիմնարկների լիազորները. ստեղծում և ազրո և զոոլիազորների ինստիտուտ, վորոնք գործում են նրանց մասին լեզած հատուկ կանոնադրության հիման վրա.

ԺԴ) իրագործում և հողի ազգայնացման մասին լեզած որենքները ու կարգադրությունները. հոկում ե, վոր ուղիղ և նպատակահարմար ոգտագործվեն հողերն ու վարելահողերը՝ թե կոլլեկտիվ և թե մենամտեսությունների կողմից, ու անհրաժեշտության գեպքում հարց և գնում վերադաս որդանների առաջ՝ նըրանցից հողերն ու վարելահողերը հետ վերցնելու մասին.

ԺԵ) ղեկավարում և հողային հասարակությունների ամբողջ գործունելությունը. հողային հասարակությունների վորոշումները հաստատում, փոփոխում և բեկանում ե, ու լիկվիդացիայի և յենթարկում այդ հասարակությունները համատարած կոլեկտիվացման ռայոններում ամեն մի առանձին գեպքում ղեկավարելով ռայոնական գործադիր կոմիտեի վորոշմամբ.

ԺԶ) միջոցներ և ձեռք առնում ժամանակին և ճիշտ հաշվառելու ջրովի ցանքային տարածություններն ըստ առանձին մշակույթների, ըստ գյուղերի, կոլխոզների և անհատական տեսությունների.

ԺԷ) միջոցներ և ձեռք առնում կանոնավոր զրության մեջ պահելու վոռոգման ցանցն ու սարքավորումները և նրանց պաշտպանելու քանդվելուց ու վսասվելուց.

ԺԸ) հաստատում և վոռոգման առուների մաքրման ու ընթացիկ նորագման պլանն ու բնապարտիքի բաշխումը և հսկում և բնապարտիքի աշխատանքների ուղիղ կազմակերպմանը.

ԺԹ) միջոցներ և ձեռք առնում, վոր ջրալիազորները ժամանակին կազմեն ջրից ոգտվողների անվանացուցակը՝ ջրովի ցանքսերի պլանների հիման վրա.

ԺՒ) ղեկավարում և վոռոգման կամպանիաների անց կացնելը, ջրի քաշխումը գյուղերի, կոլխոզների և անհատական տնտեսությունների միջև՝ հաստատապես պահպանելով դասակարգավիճակի սկզբունքը.

ԺԱ) ձեռք և առնում անհրաժեշտ միջոցները՝ ջրոգտագործման կանոնները խախտելում մեղագորներին պատասխանատվության կանչելու, նույնպես և միջոցներ և ձեռք առնում թուցնչությունը և կանխելու ջրոգտագործողների միջև ծագող միջնադապքը.

ԺԲ) կազմակերպում և ջրալին խորհուրդ գյուղխորհրդի կից, առաջ և քաշում ջրալիազորներ և ներկայացնում և հետագա հաստատման.

ԺԳ) լայնորեն աջակցում և, վոր ժամանակին ու հաջողությամբ ներմուծվի ջրային տուրքը:

6. Մատակարարման, կրավերացիալի յնվ առևլյալի բնագավառում վուղական խորհուրդը՝ իր տուած խնդիր գներով քաղաքի և գյուղի արտագրական կատի ամբապնդումը՝ հետեւյալ միջոցառությունն և անցկացնումը.

ա) միջոցներ և ձեռք առնում գյուղատնտեսական արտադրանքի պայմանագրումը լիակատար կերպով իրականացնելու իր տերիտորիայում. հոկում ե, վոր տնտեսական միացումները, կոլխոզներն ու առանձին քաղաքացիները ժամանակին կատարեն պայմանագրման պարտականությունները.

բ) ղեկավարում և պետական մթերությունների կատարումը, մթերությունների վերաբերմաք հաստատություններ և տալիս կուլակային տնտեսություններին, վճռական պայքար և մզում մասնավոր մթերողների գեմ գործող որենսդրության վորոշած սահմաններում.

շ) ղեկավարում և կոռպերատիվ շինարարության ընդլայնումը՝ նոր ձեռնարկներ կազմակերպելու միջոցով. աշակցում և սպառկոռպերացիային՝ ապրանքատար ցանցի լավացման ու կազմակերպման գործում.

դ) առևտրակոռպերատիվ սեկցիալի միջոցով վերահսկություն և սահմանում կոռպերացիալի վրա՝ ապրանքները բաշխելիս

դասակարգային գիծ տանելու գործում, այդ սեկցիայի աշխատանքին քաշելով կոլխոզային և չքավորաշմիջակալին մասսային.

յե) միջոցներ ե ձեռք առնում աշխատավորներին լիովին կոռպերացնելու, հսկում ե, վոր ժամանակին և ուղիղ արգելն միջոցների հատկացումները բատրակների ու չքավորների կոռպերացման ու կոլեկտիվացման ֆունդին, և մասնակցում ե այդ միջոցների բաշխմանը, հսկում ե նրանց ուղիղ ոգտագործմանը և միջոցներ ե ձեռք առնում, վոր ժամանակին վերադարձվեն այդ ֆոնդերից տրվող փոխատվությունները.

զ) հսկում ե, վոր առետրական ցանցը կատարի առետրի մասին յեղած կանոնները և իրագործում ե վերահսկողությունը՝ սահմանված գները պահպանելու վերաբերմամբ. իրագործում է հսկողությունը շուկաների, բազարների և տոնավաճառների վրա, սահմանում ե, թե վորքան վարձ պիտի տրվի առետրապահեստավին շենքերի և առետրի տեղերի համար.

ե) վերահսկում և իրագործում ե այն միջոցառումները, վոր ուղղած են կոռպերացիայի անդամների, կոռպերատիվ ապարատի, մատակարարման և պետառևորի որգանների գործիչների սոցիալական կազմը լավայնելուն, վճռականորեն մաքրելով դըրանք կուլակային և գասակարգային—խորթ տարրերից:

Շ) Աջամատանի բնագավառում գյուղական խորհուրդը պետք ե՝ ա) իրականանցնի հսկողությունը, վոր բոլոր հիմնարկները, ձեռնարկները և մասնավոր անձերը ճշտիլ կատարեն աշխատանքի որենսդրությունը.

ը) գրանցի բատրակների հետ կնքած աշխատանքային պայմանագրերը, նույնպես և հսկի, վոր վարձողներն այդ պայմանագրերը կատարեն.

զ) սահմանված դեպքերում բնակչությանը յենթարկի աշխատանքային, տրանսպորտային և ճանալարհային պարտիքի, նույնպես և մասնակից անի տարերային աղետների դեմ մղվող պայքարին.

յ) վճռական պայքար մղի ռանչպարության, սարքարության և աշխատանքի կուլակային շահագործման այլ քողարկված տեսակների գեմ.

յե) յերկան բերի կոլխոզների ու չհամայնացրած սեկտորի ավելցուկ բանվորական ուժը, վոր կարելի ե ոգտագործել դրսի սեղոնային աշխատանքների համար (սովորողներում, կառուցումներում և այլն) և կազմակերպի դուրսն աշխատանքի գնալը.

յը) իրականացնի կանանց աշխատանքն արտադրության բեջ արմատացնելու միջոցառումները.

ե) թույլ չափ, վոր անչափահասների, դերահասների և կառանց վարձու աշխատանքը գործադրվի՝ նրանց ուժերից վեր գործերում:

8. Բյուջետային-ֆինանսական բնագավառում գյուղական խորհուրդը՝

ա) կազմում ե գյուղական բյուջեն և ներկայացնում ե ռայոնական գործադրի կոմիտեի հաստատությանը. հաստատում ե դրամարկղյալին պլանները՝ գյուղական բյուջեի սահմաններում. ինքնուրույն բյուջեի բացակալության դեպքում կազմում ե յել ու մուտքի նախահաշիվը.

բ) գյուղական բյուջեի վարկերը տեղափոխում ե՝ միենույն բաժնի սահմաններում.

շ) հաշվի ե առնում տուրքավորման աղբյուրները և տանում ե հարկերի ու տուրքերի գանձումը.

դ) լուծում ի տեղական հարկերի ու տուրքերի լիովին գյուղական բյուջեի մեջ մտցնելու յենթակա վոչ հարկային լիկամուտների գումարները հետաձգելու, մաս-մաս վըճարելու, ջնջելու և վերադարձնելու հարցերը.

յե) գանձում ե գյուղական խորհրդի տերիտորիայում ստացվող բոլոր հարկերի ու տուրքերի ապառիկներն ու տուգանումները. կազմում ե ապառիկ ունեցողների գույքի ցուցակագրումը և վաճառում ե այդ գույքը հասարակական առուրդով.

յ) ցուցակագրում ե ժառանգական գույքը, միջոցներ և ձեռք առնում այդ գույքը պաշտպանելու համար և հաղորդում ե ռայոնական գործադրի կոմիտեին տեղեկություններ՝ բացվող ժառանգների մասին.

ե) բոլոր միջոցները ձեռք ե առնում բնակչության միջոցները մորիկիացիայի յենթարկելու՝ գյուղատնտեսական վարկի, ամեն տեսակի կոռպերացիայի, հասարակական կազմակերպությունների, պետական փոխառությունների և պետական աշխատանքային խնայողական զբանարկղների գծով.

ը) կազմակերպում և անց ե կացնում բնակչության ինքնատուրքավորումը.

թ) հաշվի ե առնում ապահովագրման առարկաները, և հավաքում ե պարտադիր կոպարային ապահովագրման վարչները, նույնպես և նպաստառմ ե կամավոր ապահովագրման բոլոր տեսակների զարգացմանը:

9. Ժողովրդական լուսավորության լեվ առողջապահության բնագավառում գյուղական խորհրդով՝

ա) կազմակերպում և կուլտուր-կրթական և տռողջապահության սեկցիա, Նրա աշխատանքին քաշելով ուսուցչությանը՝ բժշկական պերսոնալը, Ազգային կոմիերիտմիությունը, կոլխոզնիկ-ների լայն ակտիվը և մենատնտեսակարների չքավորամիջակացին ակտիվը.

— р) միջնակեր և ձեռք առնում գյուղի աշխատավոր մասսաների կուլտուր-քաղաքական մակարդակը բարձրացնելու համար, աշխատանք և տանում լինդհանուր պարտազիր ուսման ու անգրագիտության վերացման համար և ղեկավարում և տեղական բլուժելով զործող կուլտուր-կրթական հիմնարկները.

գ) զեկավարում և լեռեխանների հասարակական դաստիարակությունը, կազմակերպում և նախադպրոցական հիմնարկներ (մանկապարտեզներ, մանկամասուրներ, հրապարակներ և այլն), միջոցներ և ձեռքբանությունը մանկական անխնամության ու առանց հսկողության մնալու գեմ, խնամմակալությունն և կազմակերպում փոքրահասակների համար և հոգաբարձությունն անշափահանների համար։

դ) կազմակերպում և գյուղատնտեսական և այլ պլրոֆտեխի-
նիկական գիտելիքների մասսայական տարածումը, անց և կաց-
նում կոլլոգալին յերկտառաբրդության դպրոցների և այլ ուսում-
նական հիմնարկների ամրացումը սովորովներին, կոլլոգներին,
նույնպես և Փարբիկներին ու գործարաններին, դպրոցների և
այլ կրթական հիմնարկների կեց կազմակերպում և դպրոցական-
հողական հողամասեր ու արհեստանոցներ.

յե) կազմակերպում և չքավորագույն աշակելաներին վստ-
նաման, օրո, սնունդ և այն մատակարարելու գործը.

զ) զեկավարում և տեղական բյուջեյով գործող բուժա-սա-նկառապահովելու հիմնարկները.

յեւ միջոցներ և ձեռք առնում սահմանաբական հսկողություն կազմակերպելու և կանխելու վարակիչ ու սոցիալական հիվանդությունները և պաւարը և մղում. դրանց գեմ.

ը) միջոցներ և ձեռք առնում բնակչության մեջ տարածելու
սանհիտարա-կրթական գիտելիքները և սանհիտարա-առողջացման
միջոցառումները. կազմակերպում է հանրամատչելի դասախոսու-
թյուններ և զրուցներ՝ աշխատավորների առողջությունը պահ-
պահելու թեմաներով. կազմակերպում է խճիթ-ընթերցարաննե-
րին կից սանհիտարական. կրթության հասարակ տիստի ցուցահան-
դեսներ, առողջության անլիցուններ և զարգացնում է ֆիզկուլ-
տուրայի գործը.

թ) զարգացնում և մայրության և մանկության պաշտպահության՝ գործը. կազմակերպում և մանկական կոնսուլտացիաներ՝ կարինեաներով—հղիների համար.

Ժ) պայքարում և մալարիայի դեմ և կազմակերպում և ճահիճների չորացման ու նավթով ծածկելու, լակների ու մանր ջրափոսերի հողով լցնելու գործը.

ժա) ինամակալություն և կազմակերպում թուլամիտների ու հոգեկան հիվանդների համար:

10. Տեղական տնտեսության, բարեփառության լին նաև նաևպարհ-
մերի շինարարության բնագավառում գյուղական խորհուրդը՝

ա) իրականացնում է իր կոմունալ ձեռնարկների և մունիցիպալ վայրի յենթարկած ֆոնդի (բնակչելու շենքեր, պարոցներ, հիմանդրություններ և այլն) շինարարությունն ու նորոգումը, կազմակերպում և դրանց ուղղի շահագործումը և մունիցիպալ վայրի յենթարկած ֆոնդի հաշվեառն և տանում, կազմակերպում և գուղղի հրեեջ պաշտպանությունը.

բ) պահում և կարգին վիճակում և կառուցում և գյուղական նշանակության նոր ձանապարհներ, կամուրջներ, վորոգման սարքավորումներ (առուներ, պատճեններ և այլն).

գ) միջոցներ և գործադրում պյուղի պլանավորման, կանաչչաղարդման և եկեղացիքիկացիայի համար:

11. Կապի բնագավառում զյուղական խորհուրդը միջոցներ և ձեռք առնում տեղական կապի (փոստ, հեռագիր, հեռախոս, ռադիո) զարգացման համար, քննում ե զյուղական կապի կազմակերպման նախագիծը, մշակում ե և իր լեզրակցությանը տալիս այդ նախագծերի մասին:

12. Արդյունաբերության բնագավառում գյուղական խոր-
հառըրդը՝

ա) շահագործում և իր իրավասության տակ գտնվող արդյունաբերական ձեռնարկեներն ու կազմակերպում են նորերը.

բ) կառավարում և կարգադրում ե գյուղական նշանակություն ունեցող տարածված հանքերը (քար, ավազ, կալ և այլն).
գ) միջոցներ ե ձեռք առնում կազմակերպելու և զարգացնելու կուսարք զբաղմունքներն ու կուսարքների արտադրական կողաքիրազումը.

գ) իրականացնում և դպրությական խորհրդին յենթակա արդյունաբերական ձեռնարկների աշխատանքներին հսկելը և աջակցում և նրանց արդինալիւանների կատարմանը:

13. Անտառային սննդեսության բնագավառում պյուղական խորհուրդը՝

ա) կառավարում և տեղական նշանակություն ունեցող անտառները.

բ) կազմակերպում անտառային և անտառա-քիմիական կուտար զբաղմունքներ.

գ) կազմակերպում և տեղական նշանակություն ունեցող անտառների պաշտպանությունը, մասնակցում և համապատասխան նշանակություն ունեցող անտառների և անտառատունկերի պաշտպանությանը, պայքարի միջոցներ և ձեռք առնում անտառային հրդեհների և անտառախախումների դեմ.

դ) թույլ և տալիս փայտ կտրելու տեղական նշանակություն ունեցող անտառներից.

յ) բաժանում և համապետական նշանակություն ունեցող անտառներից փայտ բաց թողնելու արտոնյալ ֆոնդը:

14. Պահանջման վիճակագրական աջատանի բնագավառում գյուղական խորհուրդը՝

ա) կազմում և գյուղական խորհրդի տերիսորիայում տնտեսական ու սոցիալ-կուլտուրական շինարարության պլանը և հաստատելու և ներկայացնում ռայոնական գործադիր կոմիտեին.

բ) հաստատում և զբուղվորհրդի անմիջական իրավասության տակ գտնվող հիմնարկների ու ձեռնարկների գործառնական պլանները և ստուգում և նրանց իրագործումը.

գ) քննում և գյուղական խորհրդին չենթարկված, բայց գյուղխորհրդի տերիսորիայում գտնվող հիմնարկների, ձեռնարկների և կազմակերպությունների գործառնական պլանները, զբանց մասին իր յեղակցությունն և տալիս և աջակցում և այդ պլանների կատարմանը.

դ) ընտրում և վիճակագրական գյուղական լիազորներ և տանում և անհրաժեշտ վիճակագրական աշխատանքները.

յ) տանում և ծիերի գիրքը:

15. Սոցիալական ազանովուրյան բնագավառում գյուղական խորհուրդը՝

ա) հաշվեառում և այն անձերին, վորոնք սոցիալական ապահովման իրավունք ունեն, նշանակում ու վճարում և կենսաթոշակներ ու նպաստներ.

բ) կազմակերպում և ինվալիդների արտադրական արտելներ և ինվալիդներին աշխատանքալին այլ ձևերի ոգնություն հասցնելու գործը.

գ) կյանքում իրտգործում և որենքով տրվող արտոնություններն ու առավելություններն այն ինվալիդներին, վորոնք նախկին կարմիր բանակալինների, քաղաքացիական կոհիվերեւ

կարմիր պատրիզանների և կարմիր գվարդիականների թվին են պատկանում, կուլակալին բռնության զոհերին, նույնպես և այն կարմիր բանակալինների ընտանիքներին, վորոնք զոհվել են քրոնականներում և հականեղափոխության գեմ մղված պայքարում. միջոցներ և ձեռք առնում, վոր հիշված կարգերի գյուղացիական տնտեսությունները շուտափույթ կերպով կոլեկտիվացվեն.

դ) գեկավարում և գյուղացիական փօխոգնության ընկերությունների աշխատանքը.

յԵ) հոգաբարձություն և կազմակերպում չափահասների (կույրեր, խուզամրեր և այլն) վրա և համապատասխան դեպքերում, խնամակալություն անհետ կորած կամ մեռած անձերի գույքի վրա:

16. Յերկրի պահապանելու ունակուրյունն ամրապնդելու բնագավառում գյուղական խորհուրդը՝

ա) մինչորակոչիկների, զինվորական ծառայողների, զինապարտների և թիկունքային էրթապահների շարքերը դասվելու յինթականների հաշվեառն և պահում.

բ) ձիերի, սայլերի և լծասարքի հաշվեառն և պահում.

գ) մասնակցում և քաղաքացիների հերթական զորակոչին խսկական զինվորական ծառայության համար.

դ) պաշտուանում և բանվորա-գյուղացիական կարմիր բանակը կոչվածների ընտանիքների իրավական և ունեցվածքային շահները.

յԵ) միջոցներ և ձեռք առնում զարգացնելու հասարակական կազմակերպությունների՝ զինվորական գիտելիքները տարածելու պրոպագանդայի աշխատանքները, նույնպես և զարգացնելու հրացանձգալին և ուրիշ տեսակ սպորտները.

զ) ոգնում և ամեն տեսակի վարժական ստուգողական հավաքների և նախակոչիկների հավաքների անց կացնելուն.

ի) պայքար և մզում պարտադիր զինվորական ծառայությունից, նույնպես և զորակոչի ժամանակ մատակարարումից խուսափելու դեմ:

17. Դատական-հետաքննական բնագավառում գյուղական խորհուրդը՝

ա) կազմակերպում և գյուղական դատարան և զեկուցումներ և լսում նրա աշխատանքի մասին.

բ) կազմակերպում և ժողովրդական ատենակալների ընտրությունները՝ ժողովրդական դատարանին մասնակցելու համար.

զ) իրագործել և տալիս դատական վճիռները.

դ) համապատասխան գեղքերում կատարում և նոտարական գործողություններ.

յե) կաղմակերպում և այն անձերի աշխատանքի ողափործում, վորոնք ստիպողական աշխատանքներ պիտի կատարեն առանց կալանքի տակ պահելու.

18. Հեղափոխական կարգի յեվ հասարակական ապահովության պատճառակառում գլուղական խորհուրդը՝

ա) իրեն տրված իրավունքների սահմաններում հրատարակում և պարտադիր վորոշումներ և վարչական տուգանումների և բննթարկում.

բ) ապահովում և հեղափոխական կարգը և հասարակական ապահովությունը իր տերիտորիայում ու վճռական պայքար և մղում կուլակային և այլ հակախորհրդային տարրերի դեմ, վորոնք ողջված են խորհրդային իշխանության կողմից անցկացված միջոցառումների դեմ.

գ) միջոցներ և ձեռք առնում կանխելու վաճառքործությունները, վճռագործներին յերեսն հանելու և ձերբակալելու, ու հանցագործությունների տեղը և հետքերը պահպանելու համար.

դ) կատարում և խուզարկություններ, թաղցրածը բաց և անում և ձերբակալում և տուանձին անձերին.

յե) միջոցներ և ձեռք առնում պայքարելու հարբեցողության, խուզականության, գաղտնի արագ քաշելու և գաղտնի ողականառության դեմ ու իրագործում և վարչական տուգանումների յենթարկելու վորոշումները:

19. Ընդհանուր կառավարման բնագավառում գլուղական խորհուրդը՝

ա) գրանցում և քաղաքացիական գրության բոլոր ակտերը, բացի անունը և ազգանունը փոխելու ակտերից. կազմում և վիճակարական տեղեկություններ՝ բնակչության բնական շարժման մասին. տալիս և անձի վկայականներ ու տեղեկանքներ.

բ) գրանցում և կամավոր ընկերությունների և միությունների գլուղական տերիտորիայում գործող տեղական բաժանմունքները և հսկում և նրանց գործունեյության վրա.

դ) հսկում և կրոնական միացումների մասին յեղած որենքների կատարմանը:

20. Արխիվային գործի բնագավառում գլուղական խորհուրդը միջացներ և ձեռք առնում, վոր անկորուստ պահպես գլուղակարների, նրան յենթական հիմնարկների ու ձեռնարկների գործադրությամբ ավարտված բոլոր գործերը, գրքերն ու թղթերը, և

կաղմակերպում և այդ բոլոր նյութերի սահմանված ժամանակում պլանաշախ կերպով ուայոնական արխիվին հանձնելը:

III

21. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՉՈՒՐԴՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐԸ ՊՈՒՄԸ

ա) գլուղական խորհուրդը կաղմակերպում և, վորպես կանոն, ամեն մի գլուղում և ընտրվում ե ընակչության 25 հոգուց մի պատգամավոր հաշվով, բայց ընդհանուր առմամբ 3 անդամից վոչ պակաս և 60-ից վոչ ավելի:

Մանր գլուղերը կարող են միանալ ընդհանուր գլուղխորհուրդունքների ընտրելու համար այն գեղքերում, յերբ դա վնաս չբերի ընակչության տնտեսական, քաղաքական ու կուլտուրական կյանքին, նմանապես և ազգային շահներին:

Ադրբեյջանի կենտրոնական ֆորձադիր կոմիտեն և լեռնային Ղարաբաղի Շրջանային ֆորձադիր կոմիտեն համապատասխան ուայգործիումի միջնորդությամբ կարող են ներկա հոդվածով սահմանված ներկայացուցչության նորման փոփոխել համաձայն տեղական պայմանների. վերջիններս այդ մասին անմիջապես պիտի հաղորդեն Ազգային կենտրոնական ֆորձադիր կոմիտեի նախագահությանը:

բ) գլուղական խորհրդի ընտրություններին մասնակցում և ամբողջ ընակչությունը, վորն ընտրությունների մունիսային գտնվում և գլուղական խորհրդի տերիտորիայում և ոգտվում և ընտրական իրավունքով ՍՍԽՀ Սահմանադրության համաձայն:

գ) գլուղական խորհուրդն ընտրվում և մի տարի ժամանակով:

Գլուղական խորհրդի մինչժամկետային ընտրություններ կատարվում են՝

դ) յեթե գլուղական խորհրդի կազմից դուրս և գալիս նրա անդամների կեսից ավելին.

է) յեթե գլուղական խորհուրդն աղավաղում և դասակարգային պրոլետարական քաղաքականությունը, աղտոտված և խորթ տարրերով և յեթե նա անդործունաւ եւ:

Մատնանշված հիմունքներով գլուղական խորհրդի մինչժամկետային վերընտրության հարցը վճռում և ուայոնական գործադիր կոմիտեն:

զ) այն գլուղական խորհուրդը, վորն ունի ինքնուրույն բյուջե, ոգտվում և իրավական պահպի իրավունքներով.

ՀՀ Բիблиոթեկա
ՀԱՅԱՍՏԱՆ

ե) գյուղական խորհուրդն անմիջապես յենթալիվում և ռայոնական գործադիր կոմիտեին:

Այն գյուղերում, վոր միացած են քաղաքներին, գյուղական խորհուրդները յենթարկվում են համապատասխան քաղաքային կամ այդ քաղաքների ռայոնական խորհուրդներին:

Քաղաքային կամ ռայոնական խորհուրդներն՝ իրենց յենթակա գյուղական խորհուրդների վերաբերմամբ իրականացնում են այն բոլոր իրավունքներն ու պարտականությունները, վոր ունեն ռայոնական գործադիր կոմիտեները:

ը) գյուղական խորհրդի անդամները պարտավոր են ռեկտում մասնակցություն ունենալ գյուղական խորհրդի, նրա սեկցիաների ու պատգամավորական խմբակների ամենորյա աշխատանքին և անխցիկ կազ պահպանել ընտրուզների ու գյուղական հասարակական կազմակերպությունների հետ. կատարել այն հանձնարարությունները վոր նրանց վրա և զնում գյուղական խորհուրդը, նրա նախագահությունը կամ նախագահը, և իրենց աշխատանքի համար պատասխանատու են գյուղական խորհրդի և ընտրուզների առջև.

թ) գյուղական խորհրդի անդամները խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել գյուղական խորհրդի տեղիսորհեայում գործող հիմնարկների ու կազմակերպությունների նիստերին ու խորհրդակցություններին.

ժ) ընտրուզներն իրավունք ունեն մի ժամանակ հետ կոչել ընտրած անձերին և իրենց վստահությունը չարդարացրած գյուղական խորհրդի պատգամավորներին. հետ կոչվածների տեղ ըրացուցիչ ընտրություններ են կատարվում:

Այս կամ այն պատգամավորին հետ կոչելու վորոշումն ընդունվում և ընտրուզների ձայների մեծամասնությամբ և որինական և համարվում, յերբ ժողովին ներկա և տրված ընտրական հողամասի ընտրուզների 40%-ից վոչ պակաս:

Հետ կոչելու մասին ընդունված վորոշումները համարվում են վերջնական և ըստ եյտթյան բողոքարկման յենթակա չեն:

Ժա) գյուղական խորհուրդն իրավունք չունի լիազորություններից զրկելու խորհրդի առանձին անդամներին, բացառությամբ այն գետքերի, յերբ նրանք ընտրական իրավունքից զրկվում են:

Գյուղական խորհուրդը պարտավոր ե ընտրուզների տուաջ հարց գնել պատգամավորի հետ կոչման մասին հետեւյալ դեպքում:

Ժը) յերբ պատգամավորը իր աշխատանքում աղավաղում է դասակարգային պրոետարական քաղաքականությունը.

Ժզ) սիստեմատիկ կերպով չի կատարում պատգամավորական պարտականությունները.

Ժը) պատգամավորի համար անթուլատրելի վարք ունի.

Ժե) իր գործունեյության մասին ընտրուզներին տեղեկություններ տալու նպատակով՝ գյուղական խորհուրդը հրավիրում է ընտրուզների ընդհանուր ժողով (այդ ժողովներին թույլ չտալով ընտրական իրավունքներից զրկված անձերին). Նրանց հաշիվ ե տալիս իր աշխատանքի մասին տարված Յ անգամից վոչ պակաս և նրանց քննությանն ե դնում խորհրդային-տնտեսական ու կոլտուրական շինարարության կարևորագույն հարցերը:

IV

22. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԼԵՆՈՒՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Ա. Նոր հրավիրի գյուղական խորհրդի առաջին պլենումը հրավիրվում է ռայոնական ընտրական հանձնաժողովի լիազորը:

Բ. Գյուղական խորհրդի առաջին պլենումը՝

ա) լսում ե գյուղական ընտրական հանձնաժողովի հաշվետվությունը,

բ) ընտրում ե գյուղական խորհրդի գործադիր որդանները և քարտուղարին,

շ) վորոշում ե գյուղական խորհրդին կից կազմակերպելիք սեկցիաների քանակը.

զ) խորհուրդների ռայոնական համագումարի պատվիրակ և ընտրում (յեթե դա հրավիրվում է),

իե) քննում ե ուրիշ հարցեր՝ պլենումի հայեցողությամբ:

Դ. Գյուղական խորհրդի պլենումը հրավիրվում է ամսական մեկ անգամից վոչ պակաս. արտակարգ պլենում կարելի ե հրավիրել.

ա) վերադաս զործադիր կոմիտեների և նրանց նախագահությունների պահանջով.

բ) գյուղական խորհրդի կազմի մեկ յերրորդականի պահանջով.

շ) նախագահության, նախագահի կամ վերատուղիչ հանձնաժողովի հայեցողությամբ:

Դ. Գյուղական խորհրդի նիստերին մասնակցում են վճռողական ձայնի իրավունքով՝ խորհրդի անդամներն, իսկ խորհրդակցական ձայնի իրավունքով՝ գյուղական խորհրդի անդամության թեկնածուները (յեթե նրանք չեն փոխարինում խոր-

հրդի համապատասխան անդամներին), վերադաս գործադիր կոմիտեների անդամները, սեկցիաների անդամները, գյուղական և ռայոնական վերստուգիչ հանձնաժողովների անդամները, նույնպես և հատուկ հրավիրվող անձերը:

ՅԵ. Գյուղի համար ավելի կարևոր, խոշոր հասարակական նշանակություն ունեցող հարցերը լուծելու համար՝ գյուղական խորհուրդը գումարում և խորհրդի ընդլայնում պլենումներ, նրանց նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով՝ մասնակից անելով բարեկային, չքավորական և միջակային ակտիվին, մանավանդ կոլխոզների թվից, պրոֆմիութենական, կուսակցական, կոմիերիտական, հասարակական և կոոպերատիվ կազմակերպությունների ներկայացուցիչներին, կանանց պատվիրակունիշներին ժողովների ներկայացուցիչներին, սեկցիաներին, նույնպես և գյուղական պաշտոնատար անձերին (քիչենի, գյուղատրնտեսներ, ուսուցիչներ, հողաշինարարներ և այլն):

Զ. Գյուղական խորհրդի նիստերը, վորպես կանոն, պետք է լինին դուքսաց և այսուեղ կարող են ներկա լինել այն բոլոր անձերը, վորոնք ընտրական իրավունքներից զրկված չեն:

Ե. Գյուղական խորհրդի պլենումի նիստերն որինական են, յեթե ներկա և խորհրդի անդամների կեսից վոչ պակաս:

Ը. Գյուղական խորհրդի պլենումի իրավասությանը բացառապես վերաբերում հն՝

ա) գյուղական խորհրդի աշխատանքների պլանի հաստատումը.

բ) ժողովրդական տնտեսության զարգացման և սոցիալ-կուլտուրական շինարարության ռայոնական պլանի քննությունն ու նրա մասին յեղբակցություն տալը՝ ռայոնական գործադիր կոմիտեին.

գ) գյուղական բյուջեի և նրա կատարման մասին յեղած հաշվետվության հաստատելը.

դ) խորհուրդների ռայոնական համագումարի համար պատվիրակներ ընտրելը.

յԵ) գյուղական խորհրդի նախագահ, քարտուղար և նախագահություն ընտրելը.

զ) այն անձերի ցուցակի հաստատումը, վորոնք յենթական գյուղատնտեսական հարկի անհատական կարգով և այն անձերի ցուցակը, վորոնք զրկված են ընտրական իրավունքներից, այդ ցուցակները ռայոնական գործադիր կոմիտեի հաստատմանն ուղարկելու համար.

ե) առանձին անձերին հողոգտագործման իրավունքից զըրկելու հարցերի լուծումը:

Թ. Գյուղական խորհրդի կապը չքավորա-միջակային լայն մասսաների հետ ամրապնդելու և տեղական իշխանությունը բնակչությանը մոտեցնելու նպատակով՝ գյուղական խորհուրդը կազմակերպում և պլենումի արտագնած (վըեղդնոյ) նիստեր՝ տվյալ խորհրդի կողմից միացվող առանձին գյուղերում, կողմոցներում, ովհողներում, ձեռնարկներում և այլն:

V

23. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՈՐԳԱՆՆԵՐԸ

Ա. Գյուղական խորհրդի գործադիր որգաններ են հանդիսանում:

ա) նախագահությունը,

բ) նախագահը և

գ) գյուղական խորհրդի լիազորը:

Բ. Գյուղական խորհրդի նախագահությունը կազմում և ռայոնական գործադիր կոմիտեի կողմից սահմանված քանակով անդամներից և գյուղական խորհրդի նիստերի միջև յեղած ժամանակաշրջանում ոգտական և նրա իրավունքներով, բացի վճռելուց այն հարցերը, վորոնք գործող որենքներով կամ ռայոնական գործադիր կոմիտեի հատուկ վորոշումով թողնված են բացառապես գյուղական խորհրդի պլենումի իրավասությանը:

Գ. Գյուղական խորհրդի նախագահն ընտրվում և գյուղական խորհրդի կողմից. նրա անդամների կազմից և, գյուղական խորհրդի՝ նրան տված իրավունքների սահմանում, անհրաժեշտ միջոցառություն և անց կացնում գյուղական խորհրդի անունից, դրանց մասին տեղեկացնելով. գյուղական խորհրդի նախագահությանը կամ պլենումին՝ նրանց մոտակա նիստում:

Դ. Գյուղական խորհրդի նախագահը իրավունք չունի դադարեցնելու իր պարտականությունների կատարումն՝ առանց ռայոնական գործադիր կոմիտեի համաձայնության, իսկ գյուղական խորհրդի նախագահության անդամներն—առանց գյուղական խորհրդի համաձայնության:

ԵԵ. Գյուղական խորհրդի քարտուղարն ընտրում և գյուղակամ խորհրդի կողմից, վորպես կանոն, նրա անդամների կազմից, իսկ բացառիկ գեղաքերում՝ այլ անձերի թվից, վորոնք ոգտական և սույն ընտրական իրավունքով:

Զ. Գյուղեսզի առանձին գյուղերը մշտական կապ ունենան իրենց միացնող գյուղական խորհրդի հետ՝ այդ գյուղերում ընարվում են գյուղական խորհրդի լիազորներ:

Լիազորներ չեն ընտրվում այն գյուղում, վորտեղ գտնվում գյուղական խորհրդը:

Ա. Գյուղական խորհրդի լիազորն ընտրվում է տրված գյուղի ընտրողների ընդհանուր ժողովում՝ գյուղական խորհրդի այդ գյուղում ապրող անդամների թվից: Յեթե խորհրդի կազմում չկան անդամներ տրված գյուղից, լիազորն ընտրվում է ընտրողների թվից: Լիազորին հաստատում է գյուղական խորհրդը:

Բ. Գյուղական խորհրդի լիազորն այն գյուղում, վորի ներկայացուցիչն է հանդիսանում ինքը, իր աշխատանքը տանում է գյուղական խորհրդի ընդհանուր ղեկավարությամբ և հատուկ ցուցմունքներով. լիազորն իր աշխատանքի մասին հաշիվը և տալիս գյուղական խորհրդին ու համապատասխան գյուղի ընտրողների ընդհանուր ժողովին և իրավունք չունի գաղարեցնելու իր պարտականությունների կատարումն առանց գյուղական խորհրդի համաձայնության:

Գ. Գյուղական խորհրդի անմիջական կազմը խոշոր գյուղերի աշխատավորների հետ ուժեղացնելու համար՝ ծխերի խըմբին, թաղերին և այլն ամրացվում են խորհրդի առանձին անդամները:

Ծխերի խմբին, թաղերին և այլն ամրացված գյուղուկան խորհրդի անդամներն իրենց աշխատանքը տանում են գյուղական խորհրդի ղեկավարությամբ:

VI

25. ԳՅՈՒՂԵՐՈՐԴԻՆ ԿԻՑ ՍԵԿՑԻԱՆԵՐՆ ՈՒ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

Ա. Գյուղական խորհուրդներին կից կազմակերպվում են վերստուգիչ հանձնաժողովներ, վորոնց անմիջական անելիքն է իսկական ու սիստեմատիկ վերահսկողություն ունենալ գյուղական խորհրդի և նրան յենթակա հիմնարկների ու ձեռնարկների տնտեսական ֆինանսական գործունեյության վրա, նույնպես և գյուղական խորհրդի մասսայական աշխատանքի զրոյթի վրա:

Գյուղական վերստուգիչ հանձնաժողովները կազմակերպվում ու գործում են հատուկ որենքով առհմանված կարգով:

Բ. Գյուղական խորհրդի գործնական աշխատանքին. գյուղի լայն աշխատավորական մասսաներին մասնակից անելու նպատակով գյուղական խորհրդին կից կազմակերպվում են հետևյալ սեկցիանենք՝ գյուղատնտեսական արտադրական խորհրդակցություններ (թե ընդհանուր և թե հատկապես կանանց), կուլտուրակրթական, ֆինանսահարկային, առևտուրակոոպերատիվ և կենցաղային, տեղական պայմանների համաձայն կարող են կազմվել նաև այլ սեկցիաներ: Գյուղական խորհուրդներին կից կազմակերպվում են ջրային խորհուրդներ, վորոնք գործում են առանձին կանոնադրությամբ:

Այն գյուղերում, վորոնք գյուղական խորհուրդների մնալու տեղ չեն հանդիսանում, կազմվում են գյուղական սեկցիաներ.

Այն գեղքում, իերը գյուղական խորհրդի տերիստրիայում գտնվում է կրթական նույնպես և սովորողներ մեքենատրակտորային կայաններ կամ աշքի ընկնող արգունաբերական ձեռնարկներ, նրանց կից կազմակերպվում են պատգամավորական խմբակներ:

Սեկցիաները, պատգամավորական խմբակները, նույնպես և ընտրողների ընդհանուր ժողովները գործում են նրանց մասին յեղած հատուկ կանոնադրությունների հիման վրա:



ՀՀ Ազգային գրադարան



NL0199049

39.766

ПОЛОЖЕНИЕ
О СЕЛЬСКОМ СОВЕТЕ АССР
